



ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի 1/3

Հեռ. 560360, foi@foi.am, www.foi.am

FREEDOM OF INFORMATION CENTER NGO

1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի դիտարկումներն ու առաջարկները

Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի նախագծի մշակման փուլում քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը և լիարժեք մասնակցությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք ստեղծել ՔՀԿ-արդարադատության նախարարություն (կամ ՔՀԿ-կառավարություն) աշխատանքային խումբ՝ Նախագծի վրա համատեղ աշխատելու համար: Գտնում ենք, որ նախագծի ընդունումը չի պահանջում ավելորդ շտապողականություն:

Առաջարկում ենք նաև Նախագիծը, մինչև կառավարության հաստատմանը ներկայացնելն ուղարկել միջազգային փորձաքննության ԵԱՀԿ մամուլի հարցերով պատասխանատուի գրասենյակ:

Նախագծի առանձին դրույթների վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանվում է, որ «1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող ֆիզիկական անձինք, անկախ կազմակերպատիրավական ձևից՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք, օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում՝ բացառությամբ 100 տոկոս պետական մասնակցությամբ կազմակերպությունների, իրավունք ունեն ծանոթանալու իրենց փնտրած տեղեկությանը կամ այն ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը: 2. Օտարերկրյա անձինք սույն օրենքով նախատեսված իրավունքներից և ազատություններից կարող են օգտվել կապված Հայաստանի Հանրապետությունում իրենց իրավունքների և պարտականությունների հետ, ինչպես նաև միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում:»:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատություն ունի **յուրաքանչյուր ոք**: ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք նույնպես ունի **յուրաքանչյուր ոք**:

Միաժամանակ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածի սահմանում է, որ ցանկացած միջոցներով ու պետական սահմաններից անկախ իրազեկում և գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատություն ունի **յուրաքանչյուր ոք**: մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը նույնպես սահմանում է, որ տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատություն ունի **յուրաքանչյուր ոք**: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի համաձայն՝ անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատություն ունի **յուրաքանչյուր մարդ**:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը փոխել, սահմանել, որ **յուրաքանչյուր ոք** իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը կամ այն ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը

2. Նախագծի 9-րդ հոդվածը սահմանում է, որ «Բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, տեղեկությունները թաքցնելը կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելը, ինչպես նաև սույն օրենքի պահանջների այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն»: ՏՄ մասին ՀՀ օրենքի խախտման համար պատասխանատվությունը նախատեսված է ՎԻՎՈ 189.7-րդ հոդվածով, սակայն նախատեսված չեն արդյունավետ մեխանիզմներ՝ վարչական պատասխանատվություն կիրառելու համար: Մասնավորապես, ինչպես նախկինում, այժմ էլ վարչական պատասխանատվության ենթարկելու իրավասությունը թողնած է դատարաններին, այնինչ ՏՄ օրենքի կիրառման պրակտիկան վկայում է, որ դատարանների կողմից ՏՄ իրավունքի խախտման համար վարչական պատասխանատվության միջոցներ որպես կանոն չեն կիրառվում: Օրենքի գործողության 14 տարիների ընթացքում միայն երկու դեպքում է կիրառվել վարչական պատասխանատվություն, ընդ որում, հանրային պաշտոնյայի նկատմամբ՝ 1 դեպքում (Ելփինի գյուղապետի նկատմամբ): Մի կողմից, վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ պահանջները արգելքի են հանդիպում հայցի ընդունելության փուլում (օրինակ, ԻԱԿ-ն ըննդեմ ՀՀ քաղաքաշինության նախարարության վարչական դատական գործով), մյուս կողմից, վարչական պատասխանատվությունը կապված է պահանջված տեղեկությունը չտրամադրելու հետ, այնինչ դատական գործընթացները երկարատև են և դրանց ընթացքում տեղեկություն

տնօրինողը որպես կանոն տրամադրում է անհրաժեշտ տեղեկությունը, հայցի պահանջը դառնում է առարկայագուրկ և գործը կարճվում:

Գտնում ենք, որ վարչական պատասխանատվության հարցը լուծելու արդյունավետ մեխանիզմ կլինի վարչական պատասխանատվության ենթարկելու իրավասությունը SU լիազոր մարմնին վերապահելը: Արդյունքում, վարչական պատասխանատվության հարցը կազատվի դատավարական կանոնների ծանրաբեռնվածությունից, կկիրառվի վարչարարության և վարչական վարույթի կանոններով, ինչպես նաև վարչական պատասխանատվության հարցը կլուծվի ավելի սեղմ ժամկետում (քան տարիներ տևող դատական գործերի դեպքում), ինչի արդյունքում արդյունավետ մեխանիզմ կդառնա SU իրավունքի խախտումները կանխելու համար:

3. Տեղեկությունը շատ արագ հնացող և արդիականությունը կորցնող է: Դրանով է պայմանավորված, որ տեղեկություն տրամադրելու համար սահմանված են սեղմ ժամկետներ: Միաժամանակ, տեղեկություններ տրամադրելու պահանջով դատարան դիմելու դեպքում դատական գործերը կարող են տևել մինչև հինգ տարի (ԲԱԿ-ի դատական գործերի նախադեպերը), այնինչ այդքան ժամանակ անց տեղեկությունն այլևս դիմողին անհրաժեշտ չի լինում: SU վերաբերյալ գործերը պետք է քննվեն հնարավորինս սեղմ ժամկետում: **Հետևաբար, առաջարկում ենք նախատեսել SU վերաբերյալ գործերով արագացված դատաքննության կամ գործերը սեղմ ամկետում քննելու այլ մեխանիզմ:**

4. SU խոհուրդը, որն ամրագրված է Նախագծի 14-րդ հոդվածում, չի համապատասխանում SU լիազոր մարմնի միջազգայնորեն ընդունված մոդելին և դրա լիազորություններն չեն բավարարում այն պահանջներին, որոնք անհրաժեշտ են SU լիազոր մարմնին բնորոշ գործառույթները պատշաճ իրականացնելու համար:

Մասնավորապես, SU լիազոր մարմինների ինստիտուտի միջազգային փորձը վկայում է, որ տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության լավագույն երաշխիքը տեղեկատվության ազատության լիազոր մարմինն է, որը սովորաբար կոչվում է հանձնակատար: Տեղեկատվության ազատության բողոքներն ուսումնասիրելու նպատակով հատուկ նման մարմիններ են ստեղծվել եվրամիության 17 երկրներում (այդ թվում՝ Ֆրանսիա, Գերմանիա, Հունգարիա, Բելգիա, Մեծ Բրիտանիա, Սլովենիա, Էստոնիա, Իտալիայում և այլն): SU հանձնակատարներն են գործում նաև ԱՄՆ-ում, Կանադայում, Շվեյցարիայում, Նոր Զելանդիայում, Հնդկաստանում, և այլուր: SU հանձնակատարի հիմնական նպատակներն են SU օրենսդրության կիրառումը, Աջակցել վարչական մարմիններին ճիշտ կիրառել SU օրենսդրությունը, SU խախտումների բողոքարկումը: Հանձնակատարը արտադատական կարգով լուծում է տեղեկատվության ազատության ոլորտում առաջացած վեճերը:

Բացի վերոնշյալը՝ գտնում ենք, որ Մարդու իրավունքների պաշտպանը գործող օրենսդրությամբ արդեն իսկ կարող է SU ոլորտում իր լիազորությունները պատշաճ կատարել, ինչը չի արել կամ անում մինչ այժմ թերևս այլ իրավունքների պաշտպանությամբ ծանրաբեռնված լինելու պատճառով: Միաժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթները համադրելի չեն միջազգային լավագույն փորձից բխող SU հանձնակատարի գործառույթներին, մյուս կողմից,

SU հայաստանյան պրակտիկան վկայում է, որ անգամ իր լիազորությունների շրջանակում ՄԻՊ-ը օրենքի կիրարկման 14 տարիների ընթացքում չի հանդիսացել SU իրավունքի պաշտպանության արդյունավետ ատյան:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ SU լիազոր մարմինը պետք է ստեղծվի ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդվածի հիմքով՝ որպես ինքնավար մարմին:

5. Նախատեսել դրույթ, որով կսահմանվի, որ օրենքի սկզբունքները, հրապարակայնությունը պետք է հաշվի առնվեն այլ օրենքների մշակման ընթացքում և այլ գործառույթներ իրականացնելիս:

Հիմնավորում - «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում առարկայացել են առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու և պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու սահմանադրական իրավունքները: Հետևաբար օրենսդիրը պետք է այլ օրենքներ մշակելիս հաշվի առնի, որ անհրաժեշտ է ապահովել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում սահմանված՝ տեղեկություն ստանալու ազատության երաշխիքները: Առաջարկը միտված է նաև օրենսդրական դաշտը միասնականացնելուն, որի պարագայում կբացառվեն տեղեկության հրապարակում կամ փոխանցում նախատեսող այլ իրավական ակտերի և SU մասին ՀՀ օրենքի միջև հնարավոր հակասությունները:

6. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում սահմանել «տեղեկատվության ազատություն» հասկացությունը՝ կատարելագործելով գործող օրենքինը:

Հիմնավորում - գործող Օրենքում տեղեկատվության ազատությունը սահմանված է որպես տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու և դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում: Նախագծում «տեղեկատվության ազատություն» հասկացությունը դուրս է մնացել: Մի կողմից գործող Օրենքում տեղեկատվության ազատության հասկացությունն ամբողջությամբ չի արտացոլում այս սահմանադրական ազատության էությունը, մյուս կողմից դրանից հրաժարվելը խնդրահարույց է, քանի որ տեղեկատվության ազատության բովանդակության բացահայտումն էական է իրավական ակտի այլ դրույթների մեկնաբանման համար: Բացի այդ, անհրաժեշտ է «տեղեկատվության ազատություն» հասկացության շրջանակներում ընդգծել, որ այն ներառում է նաև տեղեկություն տնօրինողի կողմից տեղեկության պրոակտիվ (սեփական նախաձեռնությամբ) հրապարակմանը, այլ ոչ միայն հարցմանը պատասխան տրամադրելուն:

7. Նախագծի 4-րդ հոդվածում ներկայացված սկզբունքները բացել:

Հիմնավորում - SU սկզբունքների զուտ թվարկումը բավարար չէ այդ սկզբունքների բովանդակությունը բացահայտելու համար: Սկզբունքների բովանդակության նկարագրությունը

մի կողմից անհրաժեշտ է տարբերություններից և այլ մեկնաբանություններից խուսափելու համար, մյուս կողմից դրանց բովանդակության բացահայտումն էական է իրավական ակտի այլ դրույթների մեկնաբանման համար: Բացի այդ, անհրաժեշտ է սկզբունքներում (որպես առանձին սկզբունք կամ արդեն նախատեսված սկզբունքների շրջանակներում) *արտացոլել խտրականության բացառման, տեղեկության թարմացվածության, տեղեկության անվճարության գաղափարները:*

8. Նախագծի համապատասխան բոլոր դրույթներում սահմանել բյուջեներից ֆինանսավորվող և հանրային նշանակության կազմակերպությունների՝ որպես տեղեկություն տնօրինողների պարտականությունների առանձնահատկությունները:

Հիմնավորում - ՏՄ մասին ՀՀ օրենքի առավելություններից է հանրային նշանակություն ունեցող ոչ պետական մարմիններին, կազմակերպություններին նույնպես տեղեկություն տնօրինողների շարքում դասելը: Մակայն, մասնավոր կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունները և կապը հասարակության հետ այլ է (օրինակ, այդպիսի առևտրային կազմակերպություններն ունեն առևտրային գաղտնիք կամ մասնավոր կազմակերպությունները չեն ֆինանսավորվում կամ ամբողջությամբ չեն ֆինանսավորվում հարկատուների հաշվին և այլն), և այս առումով տեղեկություն տրամադրելու նման կազմակերպությունների բեռը պետք է ավելի նվազ լինի, քան պետական մարմիններինը: Այս առանձնահատկությունները հաշվի են առնված գործող Օրենքում, որով սահմանվել է, որ հանրային նշանակության, ինչպես նաև բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող կազմակերպությունները կարող են պրոակտիվորեն չհրապարակել պարտադիր հարապարակման ենթակա մի շարք տեղեկություններ: Հաշվի առնելով, որ Նախագծով հստակեցվել են հանրային նշանակության կազմակերպությունները (տեղեկություն տնօրինող համարվող մասնավոր կազմակերպությունները)՝ անհրաժեշտ է արտացոլել այդ կազմակերպությունների պարտականությունների առանձնահատկությունները ամբողջ Նախագծում:

9. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում ներառել

- այն ոչ պետական կազմակերպություններին, որոնցում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինն ունի մասնաբաժին ներառել տեղեկություն տնօրինողների ցանկում (որպես հանրային նշանակության կազմակերպություններ)
- կուսակցություններին,
- կրոնական կազմակերպություններին:

Հիմնավորում - կուսակցությունները և կրոնական կազմակերպությունները բացառիկ հանրային նշանակություն, դեր և ազդեցություն ունեն մարդկանց՝ համապատասխանաբար քաղաքական և հոգևոր կյանքում, մի կողմից քաղաքական իրավունքների իրականացման, մյուս կողմից՝ մտքի, խղճի և կրոնի ազատության սահմանադրական իրավունքի իրականացման հարցում: Հետևաբար, հանրությունն օբյեկտիվ շահ ունի ստանալու տեղեկություններ վերոնշյալ կազմակերպությունների և դրանց գործունեության վերաբերյալ:

Ինչ վերաբերում է այն կազմակերպություններին, որոնց մասնաբաժնի սեփականատերը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինն է, ապա այս կազմակերպությունների գործունեությունը պետք ա առավել թափանցիկ լինի՝ հաշվի առնելով այն հանգամանքը որ ի դեմս պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ այդ կազմակերպության մասնաբաժինը հանրությանն է, ինչպես նաև դրանց գործունեության արդյունքում ստացված եկամուտները մասամբ կամ ամբողջությամբ պետական կամ համայնքային բյուջեներին են: Միաժամանակ, որպես ոչ պետական կազմակերպություններ՝ դրանց համար նույնպես պետք է սահմանվեն որպես տեղեկություն տնօրինողների պարտականությունների առանձնահատկություններ՝ 3-րդ առաջարկի հիմնավորմամբ:

10. Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասը հանել:

Հիմնավորում - Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ օտարերկրյա քաղաքացիները ՏՄ օրենքով նախատեսված իրավունքներից և ազատություններից կարող են օգտվել կապված Հայաստանի Հանրապետությունում իրենց իրավունքների և պարտականությունների հետ, ինչպես նաև միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում: ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատություն ունի յուրաքանչյուր ոք: ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք նույնպես ունի յուրաքանչյուր ոք: Այնինչ, Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասով ըստ էության սահմանափակված է օտարերկրյա անձանց տեղեկություններ ստանալու ազատությունը: Հետևաբար, 6-րդ հոդվածի կարգավորումը դուրս է «յուրաքանչյուր ոք»-ից:

Միաժամանակ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածը սահմանում է, որ ցանկացած միջոցներով ու պետական սահմաններից անկախ իրազեկում և գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատություն ունի յուրաքանչյուր ոք: մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը նույնպես սահմանում է, որ տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատություն ունի յուրաքանչյուր ոք: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի համաձայն՝ անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատություն ունի յուրաքանչյուր մարդ: Հետևաբար, անկախ Նախագծում նշված կանոնից՝ օտարերկրյա քաղաքացիներն արդեն վերոնշյալ միջազգային պայմանագրերի ուժով ունեն տեղեկություն ստանալու իրավունք: Հայաստանը դրանց միացել է,

իսկ միջազգային պայմանագրերի տեղը ՀՀ օրենսդրությունում հայտնի է, այն գերակայում է ՀՀ օրենքներին, հետևաբար, Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասը պրակտիկ որևէ նշանակություն օտարերկրյա քաղաքացիների տեղեկություն ստանալու իրավունքի սահմանափակման համար ունենալ չի կարող:

Բացի վերոնշյալը՝ Տեղեկատվության ազատության ոլորտի հայաստանյան պրակտիկայում երբևէ խնդրահարույց չի եղել անհրաժեշտ չի եղել կիրառել օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ սահմանափակում նախատեսող գործող օրենքում առկա դրույթը: Փոխարենը, ստացվում է, որ օտարերկրյա քաղաքացին պետք է հիմնավորի հարցումը (իր իրավունքների և պարտականությունների հետ կապը ցույց տալու համար), ինչը հետքայլ է ՏԱ ոլորտի մեր կարգավորումներից, որոնց համաձայն դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը:

Հետևաբար, գտնում ենք, որ օտարերկրյա քաղաքացիների ՏԱ իրավունքի սահմանափակում նախատեսող Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ չէ:

11. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասում «իր պաշտոնական կայքում»-ի փոխարեն նախատեսել որևէ այլ տարբերակ, որ մի կողմից ապահովվի համացանցում պարտադիր ներկայացվածությունը, մյուս կողմից օրինակ ՏԻՄ-երը կարողանան ստեղծել միասնական կայք կամ պետական հիմնարկները կարողանան օգտվել համակարգող նախարարության կայքից և այլն:

Հիմնավորում - համացանցում պարտադիր ներկայացվածություն նախատեսելը և տեղեկությունները համացանցով հրապարակելու պարտադիր պահանջը ողջունելի է, սակայն այս պահանջի իրականացման կառուցակարգեր է անհրաժեշտ ներդնել՝ պահանջի կատարումն ապահովելու համար: Այս առումով՝ մինչև ՏԻՄ-երի խոշորացումն առաջնության ավարտը ՏԻՄ-երի համար կամ պետական հիմնարկների և կազմակերպությունների համար կարող է ռեսուրսների կառավարման առումով անարդյունավետ կամ ոչ իրագործելի լինել պատշաճ սեփական կայք ունենալը և վարելը: Ուստի, առաջարկվում է սահմանել, որ տեղեկություն տնօրինող նման մարմինները կարողանան օգտվել այլ (օրինակ՝ վերադաս) մարմնի կայքից կամ միավորվել և ստեղծել միասնական կայք:

12. Վերոնշյալ առաջարկի հիմնավորումը հաշվի առնելով՝ Նախագծի 8-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետում «քաղաքացիություն» բառը հանել:

13. Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասում «բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառերը հանել պայմանով, որ տեղեկությունը հստակորեն տարբերակվի տեղեկանքից: Այլ առաջարկ՝ բացառությունը փոխել «բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի» և սպառիչ սահմանել բացառությունները:

Հիմնավորում - տեղեկության անվճարությունը սկզբունք է, տեղեկությունը որևէ պարագայում չի կարող վաճառվել: Տեղեկության տրամադրման համար վճարելու անհրաժեշտությունը պետք է

պայմանավորված լինի տեղեկության վերարտադրման և առաքման համար ծախսեր կատարելու անհրաժեշտությամբ: Այս համատեքստում՝ այլ օրենքներով նույնպես չպետք է նախատեսվեն դեպքեր, երբ տեղեկությունը վաճառվի, իսկ տեղեկությունն փնտրողը չստանա տեղեկությունը բացառապես դա չգնելու անկարողության պատճառով: Միաժամանակ, եթե նախագծի հեղինակները նկատի են ունեցել ոչ թե տեղեկությունը որպես այդպիսին, այլ որևէ հատուկ ձևաչափով տրամադրելու դեպքում այլ օրենքով վճար սահմանելը (օրինակ, տեղեկանքի ձևով տեղեկությունը ստանալու դեպքում), ապա առաջարկում ենք տեղեկությունը հստակորեն տարբերակել տեղեկանքից, նախատեսել, որ այլ օրենքներով կարող են սահմանվել տեղեկությունը որոշակի ձևով կամ դիմողին անհրաժեշտ ձևով (տեղեկանքով) տրամադրելու համար ողջամիտ վճարներ՝ առանց սահմանափակելու տեղեկությունը «պարզ» ձևով անվճար ստանալու հնարավորությունը: Այս համատեքստում *առաջարկում ենք այս փոփոխությունների շրջանակում նախատեսել փոփոխություններ այն իրավական ակտերում, որոնք սահմանում են տեղեկության տրամադրման վճարովիությունն* («Արխիվային գործի մասին» ՀՀ օրենք, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք և այլն):

14. Նախագծի 10-րդ հոդվածի 11-րդ մասում «տեղեկությանը» բառից հետո « հետ վերցնելով իր գրավոր հարցումը: Գրավոր հարցումը հետ վերցնելու դեպքում դրան պատասխան չի տրամադրվում»-ը փոխարինել «, կատարել ցանկացած ձևով և ծավալով քաղվածքներ՝ հրաժարվելով գրավոր պատասխանից: Գրավոր պատասխանից հրաժարվելու դեպքում հարցման պահանջը համարվում է կատարված, տեղեկությունը՝ տրամադրված»:

Հիմնավորում - Նախագծի 10-րդ հոդվածի 11-րդ մասը սահմանում է, որ եթե հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողի և դիմողի փոխադարձ համաձայնությամբ դիմողը կարող է տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ հետ վերցնելով իր գրավոր հարցումը, իսկ գրավոր հարցումը հետ վերցնելու դեպքում դրան պատասխան չի տրամադրվում: Այս կարգավորումն առկա է նաև գործող Օրենքում և նպատակ ունի այն դեպքերում, երբ տեղեկությունն փնտրողը կարող է տեղում բավարարել անհրաժեշտ տեղեկությունը ստանալու իր պահանջը, ազատել տեղեկությունն տնօրինողին լրացուցիչ ռեսուրս ծախսելուց և ձևական առումով գրավոր պատասխան տրամադրելուց: Մակայն, պրակտիկայում այս ձևակերպումը կարող է տարնթերցումների տեղիք տալ, քանի որ տեղեկությունն տնօրինողը կարող է արգելել տեղեկությունն փնտրողին կատարել գրառումներ, քաղվածքներ, լուսանկարել անհրաժեշտ տեղեկությունը, ինչի պարագայում տեղեկությունն փնտրողները կսկսեն խուսափել այս հնարավորությունից: Ինչ վերաբերում է հարցմանը պատասխան չտրամադրելուն, ապա պետք է հաշվի առնել, որ մի կողմից տեղեկությունն այս դեպքում փաստացի տրամադրվում է՝ այլ ֆորմատով, ուստի անհրաժեշտ է միայն նշել գրավոր պատասխան չտրամադրելու մասին, մյուս կողմից օրենքը արդեն նախատեսում է այն դեպքերը (այլ հոդվածով), թե երբ հարցմանը պատասխան չի տրվում:

15. Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը հանել:

Հիմնավորում - Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հարցումն առանց պատասխան է թողնվում, եթե՝ դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին վեց ամսվա ընթացքում կրկին ներկայացված նույնաբովանդակ դիմումն է, որին արդեն պատասխանվել է բացառությամբ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Գտնում ենք, որ ի տարբերություն 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի (1-ին կետի դեպքում տեղեկություն տնօրինողն ըստ էության զրկված է դիմողի հետ հետադարձ կապի հանրավորությունից, իսկ 2-րդ կետի դեպքում դիմողն արդեն ծանուցված է եղել վճարելու անհրաժեշտության մասին)՝ 3-րդ կետով նախատեսված դեպքում դիմողն ակնկալում է հարցման պատասխանը և չնայած հետադարձ կապի հնարավորությանը՝ չի տեղեկացվում իր հարցման կարգավիճակի և ընթացքի մասին, առնվազն՝ պետք է ծանուցվի այն մասին, որ մերժվում է իրեն տրամադրել նախորդիվ արդեն տրամադրված տեղեկությունը: Հետևաբար, դիմողը պետք է որևէ կերպ ծանուցվի այն մասին, որ բովանդակային պատասխան չի տրամադրվում՝ նախորդիվ արդեն տրամադրված լինելու պատճառաբանությամբ: Միաժամանակ, այս կարգավորումը կարող է չարաշահումների տեղիք տալ, երբ տեղեկություն տնօրինողը դիտավորյալ կամ սխալմամբ նմանատիպ կամ նմանաբովանդակ տեղեկությունը կդիտարկի որպես նույն տեղեկություն և չի արձագանքի հարցմանը, իսկ դիմողը ծանուցված չլինելու պարագայում չի ունենա դրա դեմ առարկելու արդյունավետ մեխանիզմ: Բացի այդ, հիմնավորված չէ, թե ինչու չի տրամադրվում հենց վեց ամսվա ընթացքում կրկին պահանջված նույն տեղեկությունը: Փոխարենն առաջարկում ենք այլ դրույթով նախատեսել, որ նույն (բացառապես նույն, այլ ոչ թե նմանատիպ, նման, նմանաբովանդակ) տեղեկությունը կրկին պահանջելու դեպքում տեղեկություն տնօրինողը 5-օրյա ժամկետում դիմողին հայտնում է այդ մասին: Ընդ որում, անհրաժեշտ է հիմնավորել այն ժամկետը, որի ընթացքում կրկին պահանջված նույն տեղեկությունը ենթակա չի լինի տրամադրման:

16. Նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ մասում «15%»-ը փոխարինել «50%»:

Հիմնավորում - 15 տոկոսը չի կարող համարվել էական՝ հաշվի առնելով, որ այս պարագայում տեղեկություն տնօրինողը կարողանում է չտրամադրել փաստաթուղթը, այլ ներկայացնել քաղվածք: Գտնում ենք, որ էական է 50 և ավելի տոկոսը:

17. Նախագծի 14-րդ հոդվածը հանել. Չնախատեսել որևէ խորհուրդ կամ Լիազոր մարմին

Հիմնավորում - Նախագծի 14-րդ հոդվածում նախատեսվում է տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության հարցերով զբաղվող Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին առընթեր Խորհուրդը: Մա ըստ էության ՏՄ Լիազոր մարմնի կա ՏՄ հանձնակատարի ինստիտուտի այլընտրանքն է: Միաժամանակ, հարկ է նշել, որ ՏՄ Լիազոր մարմինների ինստիտուտի միջազգային փորձը վկայում է, որ տեղեկատվության ազատության Լիազոր մարմինը, որը սովորաբար կոչվում է հանձնակատար, տեղեկություն ստանալու

իրավունքի պաշտպանության արտադատական մեխանիզմ է՝ մարմին՝ օժտված անկախության երաշխիքներով և առանձնահատուկ լիազորություններով՝ հիմնականում տարբերվող օմբուդսմենի լիազորություններից: Միաժամանակ, ՄԻՊ-ի ինստիտուտը Հայաստանում արդեն գոյություն ունի և ՏՄ մասին օրենքում լիազոր մարմնի ինստիտուտի ստեղծումը պետք է լինի ոչ թե ինքնանպատակ, այլ որևէ նոր կարգավորում (իրավունքի արտադատական պաշտպանության նոր մեխանիզմ) պետք է սահմանվի: Այնինչ առաջարկվող Խորհուրդն ըստ էության նոր մեխանիզմ չէ, իսկ ՄԻՊ-ի լիազորությունների շրջանակում ՏՄ իրավունքի պաշտպանության հնարավորությունն արդեն նախատեսված է՝ անկախ Խորհրդի մասին Նախագծում նշելուց: Բացի այդ, ՄԻՊ-ը կաշկանդված չէ ՄԻՊ մասին ՀՀ օրենքի շրջանակներում անհրաժեշտության դեպքում ստեղծել համապատասխան խորհուրդ և դրա համար Նախագծում լրացուցիչ լիազորության անհրաժեշտություն չկա:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ Նախագծի 14-րդ հոդվածը (ինչպես նաև 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը) անհրաժեշտ չեն:

Փոխարենը, ՏՄ իրավունքի արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ է կատարելագործել արդեն գոյություն ունեցող դատական և արտադատական պաշտպանության մեխանիզմները: Այս համատեքտում առաջարկում ենք այս փոփոխությունների շրջանակում.

- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նախատեսել ՏՄ գործերն արագացված կարգով քննելու հնարավորություն,
- Նախատեսել վարչական (վերադատության) կարգով ՏՄ իրավունքի խախտումների բողոքարկման վարույթների առանձնահատկություններ (օրինակ, նախատեսել վարույթի ավելի սեղմ ժամկետ, իսկ վերաբերելի մասով հղում անել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքին):

18. Անցումային դրույթներում սահմանել ոչ միայն հոդվածների ուժի մեջ մտնելը, այլ նաև սահմանել կառավարության կողմից որոշումների ընդունման (կարգերի սահմանման) ժամկետները՝ ամենաուշը 6 ամսվա ընթացքում:

Հաշվի առնելով, որ գործող Օրենքով նախատեսված (2003թ.-ին) կառավարության որոշումը ընդունվել է միայն 12 տարի անց՝ 2015թ.-ին, հաշվի առնելով ՏՄ ոլորտի պատշաճ կարգավորման անհրաժեշտությունը՝ առաջարկվել է հստակեցնել ժամկետները:

Խմբագրական փոփոխություններ

1. Նախագծի 3-րդ հոդվածի

- 1-ին մասի 1-ին կետում «կարգով ստացված» բառերից հետո «և»-ը փոխարինել «կամ»-ով, քանի որ խոքը գնում է ոչ թե նույն տեղեկությունը և ստացված և ձևավորված լինելու, այլ՝ կամ ստացված, կամ ձևավորված լինելու մասին:
- «ստացված և ձևավորված» բառերը փոխարինել «տնօրինվող» բառով:
- 1-ին մասում հստակեցնել «պաշտոնատար անձ», «պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններ» և «վերարտադրման և առաքման իրական ծախսեր» հասկացությունները՝ իրավական որոշակիություն ապահովելու և տեղեկություն տնօրինողների շրջանակը հստակեցնելու համար:
- 1.2.-ում «ու»-ն փոխարինել ստորակետով, հստակեցնել «պաշտոնատար անձ»-ը, «պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններ»-ը («այն իրավաբանական անձինք, որոնց կանոնադրական կապիտալում առկա է պետական կամ համայնքային մասնակցություն»), բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների վերաբերյալ պրոակտիվի կարգավորումը տարածել ամբողջ օրենքի վրա:
- 1-ին մասի 4-րդ կետում «հանրային կազմակերպություն»-ը փոխել, վերականգնել գործող Օրենքի «հանրային նշանակության կազմակերպություն»-ը:
- 1-ին մասի 8-րդ կետում «հանրային տեղեկատվական հարթակ»-ը նախատեսել ոչ միայն պետական մարմիններին հարցումով դիմելու, այլ նաև ՏԻՄ-երին և մյուս տեղեկություն տնօրինողներին դիմելու, ինչպես նաև հարթակի միջոցով տեղեկատվության ազատության պրոակտիվ հրապարակման ապահովման հնարավորություն:

2. Նախագծի 5-րդ հոդվածում

- «ռեեստր»-ը փոխարինել «ցուցակ» կամ «գրանցամատյան» բառով, ինչն ավելի դիպուկ է նկարագրում նախատեսվող ցուցակի էությունը, ինչպես նաև նախատեսել, որ ռեեստրը պետք է պարունակի տեղեկությունների սահմանափակումների (դասակարգման) վերաբերյալ տեղեկություն, ինչը հնարավորություն կտա դիմողին սահմանափակման առկայության դեպքում ձեռնպահ մնալ տվյալ տեղեկությունը ստանալու համար հարցմամբ դիմելուց:
- 4-րդ մասում «հանրապետական» բառը փոխարինել «կենտրոնական կառավարման» բառակապակցությամբ:
- 4-րդ մասում և ամբողջ Նախագծում կառավարության որոշումները (սահմանած կարգերը) պարտադիր դարձնել ոչ միայն կենտրոնական կառավարման գործադիր մարմինների, այլ ցանկացած տեղեկություն տնօրինողի համար, որին կարող է վերևաբերելի լինել (որոնց վրա կարող է տարածվել) կառավարության որոշումը:
- Նախագծում կառավարության կողմից կարգ սահմանելու վերաբերյալ դրույթները համապատասխանեցնել որոշ տեղերում գրված է «որոշում», որոշներում՝ «կարգ»:

- 5-րդ մասը վերաշարադրել. չի հասկացվում, որ սեփական կարգը չընդունելու դեպքում պարտադիր կիրառելի է համարվում Կառավարության որոշումը: Առաջարկվում է կամ 5-րդ մասը միացնել 3-րդ մասի հետ՝ վերախմբագրելով, կամ ռեեստրի պահանջը թողնել միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկներ և կազմակերպություններ, համայնքային կազմակերպությունների համար:

3. Նախագծի 7-րդ հոդվածում

- առանձին մասով սահմանել պաշտոնական կայք ունենալու պարտականությունը: Նմանատիպ օրենսդրական կարգավորում առկա է՝ Էստոնիայում:
- ուղղել եզակի-հոգնակիները:
- 1-ին մասում «տեղում» բառը փոխարինել «միջոցով» բառով,
- 1-ին մասի 6-րդ կետում հարցման փոխարեն նախատեսել բոլոր ձևաթղթերի հրապարակման պահանջ,
- 7-րդ կետը շարադրել ենթակետերով (ա), բ), գ)....),
- վերականգնել գործող Օրենքով նախատեսված՝ աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները հրապարակելու պահանջը,
- 10-րդ կետում գնումների մասին հրապարակման ենթակա տեղեկությունները համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ նոր ընդունված օրենքին (կամ տեղեկությունները թվարկելու փոխարեն հղում անել օրենքին), նախատեսել մեկ անձից կատարված գնումների պայմանագրերի հրապարակում, տեղեկություն գնումների ընթացակարգի, մրցույթի մասնակիցների և արդյունքի վերաբերյալ,
- 12-րդ կետը խմբագրել ըստ ՀՀ կառավարության 1204-Ն որոշման,
- 13-րդ կետը միավորել 7-րդ կետի հետ, սահմանել, որ հրապարակման են ենթակա SU պատասխանատուի պարտականությունները:

4. **Նախագծի 8-րդ հոդվածի** 3-րդ մասում «կամ աշխատակցին» բառերը հանել, 7-րդ մասի 1-ին կետում ավելացնել, որ իրավաբանական անձի կողմից ներկայացված հարցումը պետք է պարունակի նաև իրավասու պաշտոնյայի անունը և ազգանունը:

5. Նախագծի 9-րդ հոդվածի

- 1-ին մասում կառավարությանը տալ լիազորություն սահմանելու նաև էջի ֆորմատը:
1-ին մասում նախատեսել, որ տեղեկության տրամադրման համար վճար չի գանձվում, եթե կրիչը տամադրում է դիմողը, քանի որ այդ պարագայում տեղեկության վերաբարտադրման ծախսեր տեղեկություն տնօրինողն ըստ էության չի կատարում:

6. Նախագծի 10-րդ հոդվածում

- եզակի-հոգնակիներն ուղղել,

- վերաշարադրել (ավելի մատչելի և հասկանալի դարձնել) 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը,
- 4-րդ կետը 5-րդ կետի հետ հանել, փոխարենը հարցը կարգավորել 6-րդ կետով նախատեսված կառավարության որոշմամբ,
- բանավոր հարցումների վերաբերյալ Նախագծի ընդունման հիմնավորման մեջ նշել, թե ինչպիսի մոտեցում է առկա
- 8-րդ մասում որպես ընդհանուր կանոն նշել, որ հարցմանը *պատասխան տրվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում*, այդուհետ տարանջատել ըստ մասնավոր դեպքերի,
- 11-ում «ծանոթանալ»-ից հետո ավելացնել «կատարել ցանկացած ձևով և ծավալով քաղվածքներ» (կամ կարելի է օգտագործել ՀՕ-ի բառակազմը):
- 12-րդ մասում «այն» բառը փոխարինել «հայցվող տեղեկությունը» բառերով, իսկ «այն տեղեկությունը տնօրինողին, որն ունի փնտրվող տեղեկությունը (իրավասու է տրամադրել փնտրվող տեղեկությունը):» բառերը հանել,
- 12-րդ և 13-րդ մասերում «փնտրվող» բառը փոխարինել «հայցվող» կամ «հարցվող» կամ «հարցմամբ պահանջված» բառերով,
- 14-րդ մասում հղումներն օրենքի այլ դրույթներին ուղղել:

7. **Նախագծի 12-րդ հոդվածի 7-րդ մասում** «աշխատակից» բառը հանել:

8. **Նախագծի 13-րդ հոդվածով** նախատեսված SU պատասխանատու պաշտոնյա սահմանել տեղեկություն տնօրինողի ղեկավարին: